ՄՐՑՈՒՅԹ RN#24-029

Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերման, առաքման, և նախնական գործարկման

Գնառաջարկի հրավեր

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ **01 նոյեմբերի 2024թ.**

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ **18 նոյեմբերի, 2024թ., ժամը 16:00**

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող "Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքների մասնագրերը:

Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված:

"Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի նախնական գործարկումից հետո:

Ապրանքների առաքումը պետք է կատարվի վաճառողի/մատակարարի կողմից: Առանձին ապրանքների առաքման վայրը նշված է Տեխնիկական Առաջադրանքում համապատասխան սարքավորման նկարագրությունից հետո:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը,** պետք է **մինչև 2024 թ. Նոյեմբերի 18-ի , ժամը 16:00** ներկայացվի "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝
http://card.am/hy/tenders
համապատասխան մրցույթի ***«հարց ու պատասխան»*** հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. <u>Գները:</u> Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. <u>Գնառաջարկների գնահատում:</u> Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____(Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, Ազատության 1\21-40

Մենք *(Կազմակերպության անունը)* առաջարկում ենք առաքել RN#24-027 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ	Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ
1	Խաղողի վազերի էտող մեքենա	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
2	Ալրաղաց	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
3	Խոտ եվ ճյուղ աղաց (մուլչեր) գրտնակով	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
4	Միջծառային հողաֆոեզ սենսորային	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
5	Սկավառակային խոտհնձիչ	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
6	Գութան այգեմիջյան	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*
7	Խոտհավաք	1 հատ	*(գումարը թվերով և բառերով)*	*(գումարը թվերով և բառերով)*

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի *(օրերի քանակը)* օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է *(օրերի քանակը թվերով և բառերով)* օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ.փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք

Գյուղատնտեսական սարքավորումներ

1. Խաղողի վազերի էտող մեքենա

- Ուղղահայաց կտրող մասը՝ 150 – 155 սմ (4 դանակներով)
- Հորիզոնական վերևի կտրող մասը: 50 – 55 սմ (մեկ դանակով)
- Կտրելու արագությունը՝ 2000-3000 պտույտ/րոպե
- Ջերմամշակված պողպատե դանակներ՝ STRENX 700
- Դանակների պաշտպանություն դժբախտ պատահարներից
- Փոխանցումը poly-v գոտիներով
- Գոտիների կայուն ձգվածության
- Անկախ հիդրավլիկ համակարգ՝ 2 պոմպերով, ներծծման և վերադարձի ֆիլտրերով
- Հիդրավլիկ համակարգի հովացման ռադիատոր և հիդրավլիկ թեքումով)
- Կառավարուման էլեկտրահիդրավլիկ բաշխիչ՝ կառավարման տուփով, 7 կափույր
- 1 կափույր վերելքի համար, 2 կափույր՝ աջ/ձախ կողային շարժման համար, ևս 2 կափույր՝ ուղղահայաց կտրող խմբերի աջ/ձախ թեքման համար
- Հիդրավլիկ խողովակներ և յուղահիդրավլիկ բաշխիչ՝ հոսքի կարգավորիչով և ճնշման ֆիլտրով
- Հորիզոնական վերևի կտրող մասը շարժական, խոչընդոտների աջ/ձախ շրջանցման համար
- Ամրացումը՝ տրակտորի առջևի հատվածից
- Հենք տրակտորի միացման համար
- Հարմարանք տեղափոխության և պահպանման համար
- Կարդանային լիսեռ, 540 պտույտ/րոպե
- Տրակտորի հզորությունը՝ 60 - 100 ձիաուժ

Պետք է առաքվի Արարատի մարզի Նարեկ համայնք

2. Ալրաղաց

Ալրաղացի օրական 22 տոննա արտադրողականությամբ:

Սարքավորումը պետք է լինի նոր, չօգտագործվաց:
Ծավալային քաշը պետք է կազմի առնվազն 770 գ./լիտր, ալյուրի 80-85%-ը պետք է համապատասխանի ստանդարտին 1,2,3 կարգի որակի, որպես հացահատիկային ալյուր:
Ընդհանուր էլ.հոսանքի ծախսը առավելագույնը պետք է կազմի 63 կՎտ/ժամ,լարումը 380 Վ., Հաճախականությունը 50 Հերց,

Պահանջվում է՝

- պահեստամասերի ամբողջական քանակություն, ապահովելու համար ալրաղացի անխափան աշխատանքը մեկ տարի ժամկահատվածում
-տեղադրում, հավաքում, փորձարկում
 -Երաշխիքային ժամկետ՝ մեկ տարի, սկսած ալրաղացի տեղադլումից և գործարկումից հետո:

Տեխնիկական մասնագրեր

Բաղկացած է հետևյալ մասերից՝

1. Մաքրման մաս

- շերեփային վերելակ, քանակը 1 հատ, հզորությունը՝ 0,55-0,75 կՎտ/ժ
-համակցված մաքրող մեքենա, քանակը 1 հատ, հզորությունը՝ 4,5-5 կՎտ/ժ, արտադրողակաբությունը-1-1,5 տ/ժ
-հացահատիկի լվացման (մեքենա), քանակը 1 հատ , հզորությունը՝ 2,95-3,0 կՎտ/ժ
- շերեփային վերելակ, քանակը 1 հատ, հզորությունը՝ 0,55 կՎտ/ժ
-մաքրող մեքենա, քանակը 1 հատ, հզորությունը՝ 2,2-2,8 կՎտ/ժ
-մագնիսային զտիչ, քանակը 1 հատ
-օդափոխիչ, քանակը 1 հատ, հզորությունը ՝ 1,5 -1,75 կՎտ/ժ
-փոշու հեռցուցիչ, քանակը 1 հատ
- Ուղղահայաց մաքրման մեքենա, քանակը 1 հատ, հզորությունը ՝ 3,3-3,5 կՎտ/ժ

2. **Ալրաղացի մաս**

-աղաց, քանակը 5 հատ, հզորությունը՝ 31,5- 33,0 կՎտ/ժ
-մաղում, քանակը 1 հատ, հզորությունը՝ 1,5-1,9 կՎտ/ժ
-թմբուկային սեպարատոր, քանակը 4 հատ, հզորությունը՝ 1,5-1,8 կՎտ/ժ
-օդային պտտվող փական, քանակը 1 հատ
-օդային պտտվող փական, քանակը 5 հատ, հզորությունը՝ 0,75-1 կՎտ/ժ
-Օդափոխիչ, քանակը 1 հատ, հզորությունը՝ 7,5-8 կՎտ/ժ
- Հղկող,մաքրող մեքենա, քանակը 1 հատ, հզորությունը՝ 0,75-1 կՎտ/ժ
- Պողպատե հենարան (լրիվ կոմպլեկտ) հաշվարկված 11 տն.-ի համար
-խողովակներ չժանգոտվող պողպոտից ամբողջական (լրիվ կոմպլեկտ) AISI *304*
- Կցաշուրթ (լրիվ կոմպլեկտ)
-պարագաներ (լրիվ կոմպլեկտ)
-կշեռք, կշռման շրջակայքը 0-700 կգ., քանակը 1 հատ
-ձեռքի պարկեր կարող մեքենա, քանակը 1 հատ

Պետք է առաքվի Լոռու մարզի Կուրթան համայնք

3. Խոտ եվ ճյուղ աղաց (մուլչեր) գրտնակով

- Խոտ եվ ճյուղ աղաց (մուլչեր) գրտնակով
- Աշխատանքային լայնությունը 140 սմ
- Ընդհանուր լայնությունը 170 սմ
- Հարող մուրճերը ուրագաձեվ
- Մուրճերի քանակը 14 հատ
- Հաղորդափոկերը 4 հատ
- Քաշը առնվազն 580 կգ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Հոկտեմբեր համայնք

4. Միջծառային հողաֆռեզ սենսորային

- Միջծառային հողաֆռեզ սենսորային
- Աշխատանքի կառավարումը միայն հիդրավլիկ
- Տելեսկոպիկ լայնության կառավարում
- Աշխատանքային լայնություն 260 սմ առավելագույնը
- Աշխատանքային լայնությունը 195 սմ նվազագույնը
- Ծառերի միջեւ լայնությունը նվազագույնը 40 սմ
- Փաթեթը ներառում է 3 գլխիկ
- 1/դանակ
- 2/փխրեցման դիսկավոր ցաքան 4 դիսկ
- 3/ծառաբների փակող ապարատ
- Բալանսավորման անիվների քանակը 3հատ
- Քաշը առնվազն 300 կգ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Հոկտեմբեր համայնք

5. Սկավառակային խոտհնձիչ

- Սկավառակային խոտհնձիչ 280 սմ
- Աշխատանքային լայնություն 280 սմ
- Հնձող սկավառակների քանակը 7 հատ
- Հնձող շեղբերների քանակը 14 հատ
- Աշխատանքային կարողություն 2,6-3,0 Հ/Ժ
- Տրակտորի պահանջվող հզորությունը 50 ձ/ուժ եւ ավել
- Քաշը առնվազն 570 կգ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Հոկտեմբեր համայնք

6. Գութան այգեմիջյան

- Գութան այգեմիջյան V-ա ձեւ
- Խոփերի քանակը 5 հատ
- Կողային կառավարման հնարավուրություն
- Ընդհանուր լայնություն 163 սմ
- Բարձրությունը 140 սմ
- Քաշը առնվազն 315 կգ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Հոկտեմբեր համայնք

7. Խոտհավաք

- Խոտհավաք 5 թեւանի
- Ընդհանուր Լայնությունը 530 սմ
- Աշխատանքային լայնությունը 330-380 սմ
- Անիվների կցամասը 6 անցքանի
- Քաշը առնվազն 200 կգ

Պետք է առաքվի Արմավիրի մարզի Հոկտեմբեր համայնք